


ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԱՐՄԱՇ

ԱՐՄԱՇ. Գղ. ARMACH. — Ասլան Պէյի նման զուտ հայաբնակ և անուանի գիւղ իղ-նիմիտի (Փոքր Ասիա) գաւառի մէջ. Նիկո-միդիայէն հեռու է 6 ժամ՝ հիւսիսային ա-րեւելեան կողմը: Բնակիչք 1500 հոգի, կը զբաղին բնդհանրապէս շերամագործութեամբ և երկրագործութեամբ: Ծառօթ է զիւղս իւր

հոշակաւոր Զարխափան Ս. Աստուածածնի վանքովն (թ. 160), որ կառուցուած է բլրի վրայ և շրջապատուած ու զարդարուած է զուարճալի պարտէզներով: Թէ՛ գիւղի և թէ՛ վանքի հիմնարկութիւնն եղած է 1611 թուա-կանին, և բնակիչք սերունդք են 1608ին Պարսկաստանէն Փոքր Ասիա եկող հայ-կական այն մեծ զաղութին, որոյ մեծագոյն մասն հաստատուեցաւ Ատարագար, և մէկ մասն ալ այստեղ: Թաղէոս եպիսկոպոս ե-ղած է վանքի հիմնադիրը նոյն 1611 թուին, և Արմաշու վիճակին առաջին առաջնորդը, իրեն ներքեւ ունենալով կէյվէ, Բագար, Սիօյեօզ, Կիարի, Պանտորմա, Պալքըհսեր,



Արմաշու Զարխափան Ս. Աստուածածնի վանքը:

Քերմասքի և Պիղա իրենց թեմերով: Վանքս իւր սկիզբն մինչեւ ցայժմ ունեցեր է 24 առաջնորդներ, որոց գրեթէ ամէնքն ալ ե-պիսկոպոս կամ արքեպիսկոպոս եղած են: Բարթոլոմէոս արքեպիսկոպոս Կապուտի-կեանի առաջնորդութեան ժամանակ 1786ին կը սկսի Արմաշու համար նոր շրջան մը, կանոնաւոր միաբանութեան և ուսումնարա-նի հաստատութեամբ: Նոյն ժամանակ տա-ճարը ի հիմանէ նորոգուեցաւ և վանքը նո-րէն շինուեցաւ բնագրէն և հոյակապ, բայց 1804ին վանքն ու եկեղեցին, ուսումնա-րանն և մատենադարանը պետք ունեցան

նորոգութեան: Ուստի Պօղոս արքեպիսկոպոս Ղարախօջեան, 1820ին վերաշինութեան հրովարտակ ստանալով չորս տարուան մէջ վերաշինեց եկեղեցին, նորոգեց նաեւ վանքն, և ուսումնարանն բանալով՝ վանքի զարգա-ցումը աճեցուց: Ստեփանոս արքեպիսկոպոս Զաքարեան, որ աւելի ծանօթ է Աղաւնի մականուամբ, 1825ին առաջնորդ լինելով, ուսումնարանի զարգացման ջանքերը կրկնա-պատկեց, ի նորոյ շինեց վանքի փառաւոր Առաջնորդարանը և Միաբանութեան թաղը, և հիւսիսային հիւրանոցը, որը ցարգ կը մնան, նախկին ուսումնարանը և մնացեալ

Հիւրանոցները որք 1888ի Հրդեհին այրեցան : Մտեփանոս արքեպիսկոպոս Մաղաքեանի առաջնորդութեան (1856-1865) օրով, վերջին տարիներու մէջ խանգարուած վանքը, վերստին ծաղկեցաւ, բացուեցաւ Արմաշու տպարանն և սկսաւ Հրատարակել Յոյս անուանով գրական հանդէսը : 1866 թուականին Արմաշու վանքը Ներմիկոյի վիճակէն զատուեցաւ, իրեն լծեմ պահելով միայն Արմաշ և խափալ գիւղերը. այնուհետեւ իւր առաջնորդներն սկսան կոչուել վանահայր : Աստի կը սկսի վանքին երրորդ կամ նոր շրջանը, վիճակային խնդիրներէն ազատելով լոկ ուսումնական և կրթական զարգացման ծառայելու համար : Խորէն արքեպիսկոպոս Աշոցեանի վանահայրութեան (1872-1888) ժամանակ, բացուեցաւ վանաց Բ. Ղեւոնդեանց գիշերօթիկ վարժարանը, և քանի մի տարի փայլուն կերպով յառաջանալէ վերջ, 1878ին ելեմական տագնապններով՝ նոյն վարժարանը փակուեցաւ և Յոյս հանգէլի հրատարակութիւնն զարդեցաւ : Մաղաքեա եպիսկոպոս Օրմանեանի ժամանակ (1889-1896), Արմաշու վանքը մեծաքայլ յառաջացաւ : Անմիջապէս բացուեցաւ եկեղեցական վարժարան, և այս առթիւ վանքն ալ կոչուեցաւ Արմաշու Դպրեւանք, և եօթնամեայ շրջանով 1889-96 տարիներու մէջ երկու դասարաններ աւարտեցին, և ազգն ունեցաւ դաս մը գիտնական վարդապետներ : Վանքի վրայ եղան նշանաւոր նորոգութիւններ, տաճարն ներսէն և դուռէն վայելչապէս նորոգուեցաւ և զանգակատունն աւելցաւ, ընդարձակ քարոսկիր ուսումնարան մը կառուցուեցաւ, նոյնպէս երեք յարկանի Հիւրանոց մը, շերամատան յարմար ընդարձակ շէնք մը, փուռ մը, կատարակարծեմալ ջրղաց մը, և այլն : Տնկուեցան նաեւ նոր թիւստաններ, և շերամասերով պատրաստութեան ընդարձակ դուրձ բացուեցաւ : Այժմեան Արմաշու վանահայրն է Եղիշէ եպիսկոպոս Դուրեան՝ որ կ'աշխատի Դպրեւանքին վանական և ուսումնական բարեկարգ ընթացքը կատարելապէս շարունակել և եւս քան զեւս արդիւնաշատ ընել զայն :


Վանաց Բ. Աստուածածնի Հրաշագործ պատկերը, որ անարուեստ բան մ'է և ոչ ալ Հին, առաջ գրուած էր աւագ խորանին վրայ, և ի վերջոյ ուխտաւորաց դիւրութեան համար փոխադրած են զաւթին մէջ, իսկ աւագ խորանի վրայ դրած են Աստուածածնի ուրիշ պատկեր մը աւելի ճարտար նկարուած խաւացիէ մը : Փոքր Ասիոյ աւան կողմերէն բազմաթիւ ուխտաւորներ կը դիմեն այս Հրաշագործ պատկերին, զիտաւորապէս ուխտաւորաց խումն բազմաթիւմբ կը լցուի մենաստանս՝ սեպտեմբերի մէջ Բ. Աստուածածնի ծննդեան և Վերացման խաչի տօներուն : Մայիս և Յունիս ամիսներու մէջ եւս պակաս չեն ուխտաւորք : Այժն տարի այս ուխտաւորաց թիւն կը հասնի 6էն 7000ի : Ռիտաւորք կու գան ոչ միայն Արմաշու շրջականերէն, այլ և Կոստանդնուպոլէն, Ալբանիայոյն, Փիլիպպուպոլէն. Պրուսայի, Պրիւճիկի, Չիւսնիոյ, Կուտինայի, Գաղատիոյ, և Իլիւնիոյ նա. հանգներէն : — Արմաշի Դպրեւանոց եկամուտները կը կազմեն հողային արտադրութիւնը, շերամասերով հասցի, ուխտաւորութեանց արդիւնը, և յատուկ բարերարութիւնք : Վերջերս աստ բացուած ազգային որբանոցը կը կառավարեն Դպրեւանոց խնամակալութիւնն և Վերատեսչութիւնն, Պատրիարքարանէ սահմանեալ նպաստով մը : Դպրեւանոց շրջանաւարտ աշակերտներէն շատերը գաւառաց մէջ ուսուցչութեան պաշտօն կը վարեն, իսկ վարդապետներէն ոչ սակաւք զանազան քաղաքաց մէջ տեղապահութիւն կամ առաջնորդութիւն կ'ընեն : — Ընդարձակ Օրացոյց Ազգ. Հիւանդանոցի, 1900, էջ 175-186 : Վ. Քիւնէ, Դ. 364-367 : Տեղգր. Հայս. 36-38 : Եւ այլն :

Ա Ր Փ Ա

ԱՐՓԱ. — Հին և նշանաւոր գիւղ Սիւնեաց Վայոյ ձոր գաւառի մէջ, համանուն գետոյն եղբրքը : Օրբելեաններէն յառաջ գիւղին հին բնակիչք կը յիշուին Ախրամարեան զարմէն : Օրբելեան խորխտ

իշխանը Տարսայիճ՝ հոս շինած էր իրեն
դարպաս, որ և աստ վախճանելով 1290ին,
տարին թաղեցին Նորավանքի մէջ։ Ասոր
ժամանակ Նորավանքի Սարգիս եպիսկոպո-
սը, յիշատակաց արժանի գործ մի ըրաւ,
այն է, Արփայի մէջ գետոյն վրայ «կանդ-
նեաց կամուրջ զարմանայի, տաշածոյ վիմօք,
յոյժ բարձր և ընդարձակ և լայն, հիացու-

ցիչ տեսողաց, բազում ծախիւք և անչափ
աշխատութեամբ, հրամանաւ բարեպաշտին
և մեծափառ իշխանին Տարսայիճին»։ Պատմչի
գովասանական խօսքերն կը հաւատասեն մե-
ծագործ կամրջին մինչեւ ցայսօր մնացած
աւաղելի աւերակներն, յորոց կը յայտնուի,
թէ հռակամար եղած է և ամբողջ մոխրա-
գոյն սրբատաշ քարերով կառուցուած։ ԺԳ-



Արփա գիւղի աւերակ եկեղեցին

դարուն Արփայի մէջ կը բնակէր նաեւ կա-
պանեցի Մահեանեան իշխանաց պալազաստն՝
Ամիրա որդի Զուրջի, որ Տարսայիճէն 4000
գրամով գնելով Աղբա կոչուած այգին,
նոսրեց Նորավանքից, և Սաեփանոս եպիսկո-
պոսն ալ սահմանեց իրեն համար հինգ պա-
տարգ ամէն տարի անխափան կատարել։
Հին Արփայի մէջ չկայ իշխանական ապա-

րանք և հնութեամբն աչքի ինկնող մի շի-
նութիւն, բաց ի կիսակործան և ամայի ե-
կեղեցիէն։ Ստեփանոսի յաջորդ Յովհաննէս
եպիսկոպոսն կառուցած է փոքրիկ և վայել-
լուչ եկեղեցի՝ յանուն Ս. Աստուածածնի,
որ 1840ին խախտելով սիրուն կաթողիկէն
ալ խոնարհած է։ Ամբողջապէս շինուած է
մաքուր սրբատաշ գեղին քարերով, բառա-


կուսի ձեռով. ունի չորս յուսամուտ իւրաքանչիւր կողմը մէկ մէկ հատ, և երկու զոներ արեւմտեան և հարաւային կողմերը: Եկեղեցւոյս ներսի կողմը խաչաձեւ է, առանձնապէս բարձրացած չորս բարձրակ սիւններ կը վերցնեն տանիքը՝ որ սրբատաշ քարերով սալած է: Գեռ եւս անխախտ մնացած են բեմն, սեղանը, վեճ քարն և երկու կողմնակի խորաններն: Եկեղեցւոյս արեւմտեան զոնէն կը մտցուէր երբեմն գեղեցկաշէն ժամատուներ, որ այժմ աւերակ է. նոյն դրան վրայ կիրաւորուի մէջ կայ Տիրամօր քանդակապատկերը, Յիսուս գիրկը զահի վրայ նստած, ամբողջ նրբադրուագ ողկուզներով և ծաղիկներով զարդարուած շրջանակի մէջ առնուած: Երջանակէն դուրս քանդակուած է ՉՀԱ (= 1322) Թուականին շինողի արձանագրութիւնը. ուրիշ արձանագրութիւն մի եւս կայ հարաւային դրան վրայ: Գաւթի մէջ կան բաւական թուով խաչքարեր և քանդակազարդ տապաններ՝ հանդերձ արձանագրութեամբք: Տապանաքարերու արձանագրութեանց նորագոյն թուականը կը հասնին մինչեւ մեր դարը:

Հին Արփայ գիւղը այժմ ամայի է, վասն զի ժամանակի բնթացից մէջ գետը մաշած ըլլալով, այն հողաբլուրն որոյ վրայ կը զբնուէր գիւղն, բնակիչք զբնթէ դար ու կէս առաջ, Արփայէն քիչ մը աւելի ցած գէպի արեւմուտք փոխադրուած և նոր գիւղ մը հիմնած են հնոյն անուամբ: Այժմեան Արփայ գիւղը ունի 60 տուն հայ բնակիչ, որոնք իրենց մեռեալները կը թաղեն հին Արփայի գերեզմանատան մէջ: Գիւղիս բնակիչները, տարին մէկ անգամ ուխտի կ'երթան հին Արփայի եկեղեցւոյն, ուր պատարագ եւս մատուցանել կու տան: — Արփայէն քիչ հեռու Գարա—տոշ (Սեւ ջուր) կոչուած աղբերակի մօտ, քարաբլրոյ մը ստորոտը կան երկու նահատակաց ուխտական գերեզմաններ: Վերոյիշեալ աւերակ կամրջի արեւմտակողմն ալ բլրակի վրայ՝ որոյ սահմանն կը կոչուի Վարդապետի հող, կայ սրմնայարկ խաչարձան մը ԶԻԲ (= 1303) Թուականի արձանագրութեամբ:

Ժե՛ դարու սկիզբը Արփայի բնակչաց մէկ

մասը սերիշնորու հետ գերի գնաց ի Պարսկաստան. որք միջէն Գրիգոր անուամբ մէկը, ըստ Առաքել պատմիչի (ԺԳ) «պարթեւահասակ և յաղթանկաւ, և սրտին արի, բանիւք և խիօք հանճարեղ, և հաւատովն և սիրովն Քրիստոսի հաստատ և ջերմագոյն», կը բնակէր փարիոյ գաւառի Խոյիկան կոչուած գիւղը, և կը քաջաբերէր գերեկիցները հաստատուն կենայ իրենց հաւատոց մէջ. որ և ի վերջոյ պիտի կենալով բրիտանական հաւատոց վերայ, վկայօրէն կատարեցաւ 1621 թուին: Այս գիւղէն էր նաեւ Խաչիկ անունով մէկուն Ազիզ կոչուած զուտորը, որ սուտ ամբաստանութեամբ մը յուրացութիւն ստիպուելով, հաստատ կեցաւ հաւատոց մէջ, և Նախճաւանէն դուրս միրայէն պարանով կանխով վար ձգուեցաւ. բրիտանեայք վերցնելով պատուով թաղեցին, 1679 թուին: — Սիւսական, 181—184: Հնոքիսիք Վաւորեից, Թ. 266: Եւ այլն:

Հ. ՍՈՒԲԻԱՍ ԵՓՐԵՍԻԱՆ



ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԵՐԵՆԵՆ

(Շար. տես 307)

§ 7. Հին Հայերէն *ո-ի* համապատասխանող տառի հնչման մէջ, արդի գաւառաբարբառք կը միաբանին յայտ, որ հին *ո-ի*, ինչպէս նաեւ *ե-ի*, միաժանի բառերու սկիզբը բաղադրեալ ձայն մը կը համապատասխանէ, որուն առաջին բաղադրուցիչ մասն Վ (v) է. արեւելեան Հայերէնն այս պարագայի մէջ բնդհանրապէս հին *ո-ի* համապատասխան կը դնէ *ue* (ve), *une* (vue)¹. Իսկ արեւմտեանը *uo* (vo)²: Գէպ ի հինէ ելլելով, նոյն իսկ

1. Հմմտ. Tom. Dial. v. Ach. էջ 33:

2. Հմմտ. Mser. Dial. v. Mus, էջ 58: Լեւհայ գաւառաբարբառ բառերու սկիզբը *vo* հնչման հիւս ունի նաեւ սկիւր *vo*. *vo*րք = զատկան *vo*ր, *vo*ւ = զատ. *vo*լ. *vo*ճ = զատ. *vo*ւն, *vo*ր = զատ. *vo*ր, *vo*ր = զատ. *vo*ւ. Han. WZKM. 1: